ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

# ՀՐԱՄԱՆ

№ 330

«20» 03 2008թ. ք. Երևան

## 2008Թ. ԱՊՐԻԼԻ 9-ԻՆ ԵՐԵՎԱՆԻ «ԱԶԱՏՈՒԹՅԱՆ» ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԶՈՐԱՀԱՆԴԵՍ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության 3-րդ Նախագահի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ զորահանդես նախապատրաստելու և անցկացնելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալներին, վարչությունների ու առանձին բաժինների պետերին, զորամիավորումների և զորամասերի հրամանատարներին՝

2008թ. ապրիլի 9-ին, ժամը 15:00-ին Երևանի «Ազատության» հրապարակում անցկացնել զորահանդես (հավելված 1):

2. Զորահանդեսի հրամանատար նշանակել ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ գեներալ-լեյտենանտ Է.Ապրիամովին:

3. Զորահանդեսի մասնակիցների կազմում ընդգրկել.

- Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտից՝ 2 շարային,
- ՊՆ 24923 զորամասից՝ 2 շարային,
- ՀՀ կառավարությանն առընթեր ԱԱԾ-ից.
- սահմանապահ զորքերից՝ 1 շարային,
- հատուկ նշանակության գնդից՝ 1 շարային,

(ԱԱԾ տնօրենի համաձայնությամբ).

- ՀՀ ոստիկանությունից՝ 2 շարային,

(ՀՀ ոստիկանության պետի համաձայնությամբ).

- ՀՀ ՊՆ 14746 զորամասից՝ պատվո պահակախումբը և ԳՇ նվագախումբը.

4. Զորահանդեսին ընդգրկված զորամասերը մասնակցում են իրենց մարտական դրոշներով.

- առաջնորդող շարայիններում ընդգրկել տասնմեկ սպա, որոնցից մեկը՝ առջևից, մյուս շարայիններում՝ չորսական սպա, որոնցից մեկը դարձյալ առջևից, յուրաքանչյուր շարային անձնակազմի թվաքանակը՝ 36 պարտադիր ժամկետային զինծառայող կամ կուրսանտ.

- շարայինները գլխավորում են զորամասերի հրամանատարները և նրանց երեք տեղակալները:

5. Զորահանդեսի մասնակիցների համազգեստը՝

-սպաների և ենթասպաների համար՝ տոնական, ոսկեգույն փոկեր, սպիտակ ձեռնոցներ,

-կուրսանտների, ժամկետային պարտադիր զինծառայողների և սերժանտների համար՝ ամենօրյա, սպիտակ փոկեր, ձեռնոցներ և ինքնաձիգներ:

6. Զորահանդեսի մարզումները սկսել ս.թ. մարտի 21-ից և անցկացնել ամեն օր՝ զորամասերի մշտական տեղաբաշխման վայրում, իսկ մարտի 28-ին, ապրիլի 3-ին և 5-ին, ժամը 11.00-ին՝ Երևանի «Ազատության» հրապարակում:

Զորահանդեսի գլխավոր փորձն անցկացնել ապրիլի 8-ին, ժամը 11.00-ին՝ Երևանի «Ազատության» հրապարակում:

7. ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Յու.Խաչատուրովին՝

զորահանդեսի կազմակերպման և անցկացման համար տրամադրել.

- զորահանդեսների համար նախատեսված «ՁԻԼ» ավտոմեքենաները՝ ՀՀ նախագահի նստավայրից ՀՀ պետական դրոշը տեղափոխելու համար,

- ավտոտրանսպորտ՝ հետևյալ հաշվարկով.

- Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտից՝ 92 զինծառայողի տեղափոխելու համար,
- ՊՆ 14743 զորամասին՝ 3 հատ ՊԱԶ մակնիշի ավտոմեքենաներ:

8. Զորահանդեսին N24923 զորամասից, ՀՀ կառավարությանն առընթեր ԱԱԾ-ից և ՀՀ ոստիկանությունից ընդգրկված մասնակիցների տեղափոխումը կատարել իրենց ուժերով:

9. ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Գ.Սեյրանյանին՝

- զորահանդեսի մասնակից ժամկետային պարտադիր զինծառայողներին և կուրսանտներին ապահովել նոր համազգեստով, սպիտակ փոկերով, ձեռնոցներով և անհրաժեշտ պարագաներով,

- զորահանդեսի նախապատրաստման և անցկացման համար տրամադրված ավտոտրանսպորտն ապահովել անհրաժեշտ քանակությամբ վառելիքաքսուքային նյութերով՝ համաձայն համապատասխան հրամանատարների կողմից ներկայացված հայտերի:

10. ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության պետ, գեներալ-մայոր Վ.Գասպարյանին՝

- ապահովել զորահանդեսի մասնակիցների ուղեկցումը մշտական տեղակայման վայրերից մինչև Երևանի «Ազատության» հրապարակ /մարտի 28-ին, ապրիլի 3-ին, 5-ին, 8-ին և 9-ին/,

- զորահանդեսի փորձերի օրերին Երևանի «Ազատության» հրապարակի տարածքում ապահովել հասարակական կարգի պահպանումը,

- ՀՀ ոստիկանապետի համաձայնությամբ, ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ կազմակերպել Երևանի «Ազատության» հրապարակի շարահրապարակի ծնավորումը և գծագրումը սպիտակ ներկով:

11. ՀՀ ՊՆ ԼՏՍՍ վարչության պետ, գեներալ-մայոր Վ.Ավետիսյանին՝

Երևանի «Ազատության» հրապարակի տարածքում, ՀՀ նախագահի աշխատակազմի հետ համաձայնեցնելով, տեղադրել համապատասխան ձայնային սարքավորումներ (քանակը չբավարարելու դեպքում՝ վարձակալել):

12. ՀՀ ՊՆ ռազմաբժշկական վարչության պետ, փոխգնդապետ Ա.Փարսադանյանին՝

Երևանի «Ազատության» հրապարակում, փորձերի և զորահանդեսի ժամանակ, տրամադրել սանիտարական մեքենա և բժշկական անձնակազմ:

13. ՀՀ ԶՈւ գլխավոր շտաբի պետ- պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, գեներալ-գնդապետ Ս.Օհանյանին՝

ստանձնել հրամանի կատարման հսկողությունը:

14. Հրամանը հասցնել ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալներին, ՊՆ և ԶՈւ ԳՇ վարչությունների, առանձին բաժինների պետերին, Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի պետին, ՀՀ կառավարությանն առընթեր ԱԱԾ տնօրենին, ՀՀ ոստիկանության պետին, զորահանդեսին մասնակցող զորամիավորումների և զորամասերի հրամանատարներին:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ